Արցախի Հանրապետության և Սփյուռքի հայկական վարժարանների և դպրոցների /ամենօրյա կամ միօրյա/ միջև համագործակցության ծրագրի



ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ծրագրի նպատակներն ու սկզբունքները

Կրթության զարգացման ռազմավարության շրջանակներում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նախատեսվում է իրականացնել Արցախի Հանրապետության և Սփյուռքի հայկական վարժարանների և դպրոցների միջև «Քույր դպրոցներ» ծրագիրը, որի հայեցակարգը ներկայացվում է ստորև:

Սույն Հայեցակարգը նպատակ ունի զարգացնել և բարձրացնել Արցախի Հանրապետության դպրոցների և Սփյուռքի հայկական վարժարանների և դպրոցների /ամենօրյա կամ միօրյա/ կրթության որակի մակարդակը, ստեղծել ամուր կապ Սփյուռքի հայկական կրթօջախների և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների միջև:

Հայեցակարգի հիմքում դրված է փորձի փոխանակումը և համագործակցության արդյունավետության միջազգային առաջադեմ փորձի արդյունքների ազդեցությունը կրթության զարգացման գործընթացի վրա:

«Քույր դպրոցներ» ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության և Սփյուռքի հայկական վարժարանների և դպրոցների համագործակցությունը՝ համատեղ դասերի, ուսուցիչների փորձի փոխանակման, կրթական և կրթամշակութային ծրագրերի ուսումնասիրման ու փոխանակման, փոխադարձ այցելությունների, որոշ դեպքերում՝ առցանց հանդիպումների միջոցով՝

- բարձրացնելով կրթության որակը,
- ընդլայնելով աշակերտների աշխարհայացքն ու հմտությունները
- աշակերտների համար ստեղծելով նոր՝ ժամանակակից կրթական միջավայր,
- հնարավորություն ստեղծելով շփվելու իրենց հայրենակից հասակակիցների հետ,

- ստեղծելով զբաղվածության և զարգացման նոր հնարավորություններ:

«Քույր դպրոցներ» ծրագիրը թույլ կտա կրթական ու մշակութային փոխանակման ծրագրեր իրականացնել, փոխադարձաբար օգնել միմյանց՝ լրացնելու դպրոցների կրթամշակութային և գույքային կարիքները, ինչպես նաև ավելի խորը պատկերացում կազմելու մի կողմից Արցախի ու արցախցիների, մյուս կողմից Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների և առհասարակ, միասնական հայրենիքի մասին:

«Քույր դպրոցներ» ծրագրի ներդրման արդյունքում նախատեսվում է Արցախի սահմանամերձ գյուղերի դպրոցների և Սփյուռքի հայկական վարժարանների և դպրոցների համագործակցության շրջանակներում ստեղծել քույր դպրոցներ, որոնք կնպաստեն՝

- դպրոցներում աշակերտների առօրյայի հետաքրքիր կազմակերպմանը,

- փոխադարձ շփումների ժամանակ, գործնականորեն կիրառելով լեզուները, նաև արցախյան բարբառը՝ նպաստելով լեզվական հմտությունների զարգացմանը,

- աշակերտների կրթական մակարդակի բարելավմանը և տեղեկատվություն ստանալու նոր հնարավորությունների ստեղծմանը,

- նոր կրթական ծրագրերի երկուստեք ծանոթացմանը,

- ուսուցչական կազմի հմտությունների և փորձի փոխանակմանը /դասագործընթացի կազմակերպման տարբերություն-նորամուծություն, մանկավարժական տեխնիկայի ուսումնական նյութերի փոխանակում/,

«Քույր դպրոցներ» ծրագրի իրականացման հիմքում դրված է կրթական համակարգի բոլոր շահառուների մասնակցության սկզբունքը:

Նախատեսված է, որ ծրագրին մասնակցություն կունենան դպրոցների մանկավարժական խորհուրդները, տվյալ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, ծնողները, դոնոր կազմակերպությունները, արտադպրոցական գործընկերները, ինչպես նաև ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ԱՀ Նախագահի Սփյուռքի հարցերով խորհրդականը և Սփյուռքի հայկական վարժարանների ու դպրոցների ղեկավար կազմերը և այլ շահագրգիռ մարմիններ:

Յուրաքանչյուր համայնքի քույր դպրոցի ծրագիրը և գործարկման ընթացքը ամրագրվելու է անհատական հայեցակարգի հաստատմամբ:

Ուսուցիչները, ծնողները, համայնքապետերը մասնակցություն կունենան ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խնդիրների լուծմանը:

«Քույր դպրոցներ» ծրագրի անձնակազմը

«Քույր դպրոցներ» ծրագրի համակարգողները դպրոցների տնօրինությունն է՝ ի դեմս տնօրենի, ուսումնական, դաստիարակչական, մասնագիտական կողմնորոշման աջակցության գծով տեղակալների, դպրոցների աշակերտական, մանկավարժական, ծնողական խորհուրդները և համայնքապետերը: Ծրագրի ինստիտուցիոնալ համակարգումը և վերահսկումը վերապահված է ԱՀ ԿԳՄՍ նախարարությանը և ԱՀ Նախագահի Սփյուռքի հարցերով խորհրդականին:

Դպրոցի մանկավարժական հայեցակարգը

«Քույր դպրոցներ» ծրագիրը չպետք է դիտարկել որպես առանձին կառուցվածքային տարր, այլ որպես տվյալ դպրոցում կրթական գործընթացի բարելավման և զարգացման նոր հնարավորություն, որը իրականացվելու է դպրոցի կողմից:

Յուրաքանչյուր դպրոցի «Քույր դպրոց» ծրագիրը իրականացվում է անհատական մոտեցման կիրառմամբ: Այդ ծրագրի հաջողությունը կախված է ծրագրի անձնակազմի ստեղծագործական և նորարար մոտեցումներից, քույր դպրոցների վարչական, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների փոխըմբռնումից և համագործակցությունից:

Արցախի Հանրապետության յուրաքանչյուր դպրոց

- մշակում է սեփական մանկավարժական ծրագրերը և միջոցառումների քանակն ու ժամանակացույցը, որը քննարկվում է դպրոցի մանկավարժական խորհրդում և համադրվում Սփյուռքի քույր դպրոցի հետ: Հայեցակարգի քննարկման և մշակման փուլում հաշվի են առնվում տվյալ դպրոցում և համայնքում առկա իրավիճակները, արտադպրոցական գործընկերների օժանդակության հնարավորությունները: Հայեցակարգը կրում է երկկողմ բնույթ և այն հաստատվում և ընդհանուր է երկու կողմերի համար:

- ստեղծում է ֆեյսբուքյան համատեղ էջ-խումբ, Zoom հարթակ, այդ էջերում ընդգրկում է դպրոցի տնօրենին, ուսուցիչներին, համագործակցությամբ շահագրգռված անձանց և աշակերտներին:

- կազմում է փորձնական դասացուցակ և կազմակերպում առցանց հանդիպում-վեբինար՝ երկու դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում նրանք կարող են փոխանակվել փորձով, մեթոդաբանությամբ, ուսումնական նյութերի համադրմամբ: Օրինակ, Արցախյան կողմը փոխանակում է հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն առարկաներից իր փորձը, իսկ սփյուռքյան կողմը անգլերեն, ֆրանսերեն, այլ լեզուներ, ինֆորմատիկայի գիտելիքներ, ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա և բնագիտական այլ առարկաներից:

- կազմում է փորձնական դասացուցակ և կազմակերպում առցանց հանդիպում-վեբինար՝ երկու դպրոցների յուրաքանչյուր դասարանի աշակերտների մասնակցությամբ, որի ընթացքում նրանք ծանոթանալով միմյանց հետ, մասնակցում են համատեղ օնլայն դասերի՝ ուսուցիչների կողմից նախապես մշակված առարկայական դասացուցակ-ժամանակացույցով:

- համավարակով պայմանավորված իրավիճակը հաղթահարելուց հետո կազմակերպել փոխայցելություններ՝ կրթամշակությային-ժամանցային բաղադրիչով, որոնք կօգնեն ավելի լավ ճանաչել միմյանց՝ որպես աշխարհի տարբեր ծայրերում ապրող, բայց մեկ հայրենիք ու ազգություն ունեցող հայեր: Փոխայցելությունների ընթացքում գործընկեր դպրոցների աշակերտները /ըստ ցանկության/ կարող են հյուրընկալվել իրենց քույր դպրոցի աշակերտների տանը՝ միմյանց կենսակերպին, ավանդույթներին ու մտածելակերպին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով:

Իրավական կարգավորումը

«Քույր դպրոցներ» ծրագրի իրագործման համար հիմք են հանդիսանում ԱՀ կառավարության կողմից մշակված հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը, որով «ապահովում է հանրակրթական պետական ծրագրերի, հանրակրթական այլընտրանքային, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային հիմնական ծրագրերի գործածությունը»:

«Քույր դպրոց» ծրագրի գործընկերները

ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը «Քույր դպրոցներ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում նախատեսում է համագործակցություն բարերարների, բարեգործական հիմնադրամների, ԱՀ Նախագահի խորհրդական-հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Սփյուռքի հարցերով Ազատուհի Սիմոնյանի և իր գրասենյակի հետ: